Սակայն առ ժամն ոչ կարացին Հայք 'ի գլուխ տանել զգործն, այլ զկնի վեց ամաց Նորոգեաց զայն Անդրիաս Պատրիարք ըստ մտաց հրովարտակին, և յետ լրման գործոյն՝ զնաց դատաւորն բազմութեամբ 'ի քննութիւն, և եդիտ զամենայն ինչ ըստ հրամանի Արքային, (1571)։

Անտանելի էին բռնութիւնք այլազգեաց՝ և կարի դըժուարին յազգեցուցանել զնոսա, և չիջուցանել զցասումն սրտմտութեան նոցին, զի չեւ եւս մոռացեալ էին Հայք զնեղութիւնս զոր կրեցին յայլազգեաց ամօք յառաջ վասն սեփհականութեան իւրեանց· և ահա 'ի սին ամի նորոգեցաւ դառնութիւնն· զի միւսանգամ ամբարձին զբլուխ՝ և խնդրէին գրաւել զայգիս և զձիթենիս, թէ 'ի մէջ քաղաքին և թէ արտաքոյ նորին, և զգերեզմանատունն իսկ գլխովին· և պահանջէին 'ի միաբանաց բազում ինչ, և 'ի չգտանել զելս իրաց և զերծանիլ 'ի ձեռաց նոցա· Անդրիաս Պատրիարք գրեաց գիր աղաչանաց առ Արքայ, և 'ի ձեռն հաւատարմին իւրոյ առաքեաց զայն 'ի Թագաւորեալ քաղաքն· յայտ արարեալ զտառապանս և զնեղութիւնս իւր՝ զոր կրէր յերեսաց այլազգեաց· գրեցաւ հրովարտակ առ դատաւորն, չլսել զայնպիսի դատս և զամբաստանութիւնս առանց Արքունի հրամանի· մանաւանդ որ անցեալ իցէ ամս 15· գիտելով թէ այլազգիք սակս ագահութեան իւրեանց՝ հակառակ օրինաց եւ Կայսերական հրամանի՝ յարուցեալ են 'ի վերայ ստացուածոցն Հայոց· ապա պատուիրէ մերժել զնոսա, եւ չլսել զդատս նոցա, և զանհնազանդսն ծանուցանել 'ի Դուռն, և չտալ թոյլնելել զազգն Հայոց· 'ի Ս Մուհարրէմ, ՉՎՀ (1566)։

Անդրիաս եպիսկոպոս, յետ բարւոք կառավարելոյ զաթոռն Երուսաղէմի, և վարելոյ զիշխանութիւն Պատրիարքութեան ամս 29 վախճանեցաւ, սա արար շինութիւնս և նորոգութիւնս 'ի վանօրայս, և վաստակեցաւ 'ի զանազան գործս աթոռոյն, կրեալ վիշտս և դառնութիւնս յօտարաց, զնեաց զտունս յայլազգեաց առաջի վանաց Ս· Յակոբայ յարեւմուտս կոյս, և քակեալ զնոսա՝ զտեղին արար պարտէզ ձիթենեաց, և զմի մասն նորին զնեաց յաջորդն Դաւիթ եպիսկոպոս (1571)։

Զկնի վախճանի Անդրիաս եպիսկոպոսի, ընտրեցաւ յա-